ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

Չորեքշաբթի, 13 մայիսի 2020 թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ
Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունը.

1. Վարչապետի աշխատակազմում Ներքին և արտաքին ազդարարման համար պատասխանատու անձը Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վարչության պետ Ալեքսանդր Ղազարյանն է, հեռ.՝ (+37410) 51-58-70, էլ. հասցե՝ aleksandr.ghazaryan@gov.am:

2. Վարչապետի աշխատակազմում Ներքին և արտաքին ազդարարման պատասխանատու անձի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է ՀՀ կառավարության պաշտոնական՝ www.gov.am կայքի գլխավոր էջի ներքևի ձախ անկյունում՝ «Ներքին և արտաքին ազդարարման պատասխանատու» անվանումով ենթահղումով: Նշված ենթահղումը կայքում տեսանելի և ակտիվ չի եղել տեխնիկական պատճառներով, ինչի կապակցությամբ հայցում ենք ներողամտություն:

3. Վերջին մեկ տարում Վարչապետի աշխատակազմ ներքին և արտաքին ազդարարման ստացման դեպքեր չեն գրանցվել:

Վարչության պետի պաշտոնակատար
Արմեն Խաչատրյան

Հեռախոս՝ (374 10) 52-87-12
Phone: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am
Կայքէջ՝ www.gov.am